ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

Ապրիլի 21-ին տեղի ունեցավ ՀՀ ԳԱԱ տարեկան ընդհանուր ժողովը, որին ներկա էին ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը, *Ն.Ս.Օ.Տ.Տ.* Գարեգին Բ կաթողիկոսը, *վարչապետ* Տիգրան Սարգսյանը, *ՀՀ կառավարության անդամներ, բարձրաստիճան հյուրեր:*

Բացելով ժողովը ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Ռաֆիկ Մարտիրոսյանը *ներկաներին տեղեկացրեց, որ ժողովին մասնակցում են արտերկրների 70 անվանի հայ գիտնականներ, որոնք 2008 թ. վերջերին ընտրվել են Հայաստանի գիտությունների ակադեմիայի արտասահմանյան անդամներ: Այնուհետև ձայնը տրվեց Վեհափառ Հայրապետ Գարեգին Բ կաթողիկոսին, որը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի օրհնությունը բերեց ժողովի մասնակիցներին և հայրապետական մաղթանքները:*

Գիտությունների ազգային ակադեմիայի 2008 թ. գիտական գործունեության արդյունքների մասին հաշվետու զեկուցումով հանդես եկավ ՀՀ ԳԱԱ նախագահ Ռաֆիկ Մարտիրոսյանը: *Նա ասաց, որ 2008 թ. ՀՀ ԳԱԱ 27 ինստիտուտներում և 4 գիտական կենտրոններում շարունակվել են գիտական մշակումներ բազային ֆինանսավորմամբ, նպատակային ու միջազգային ծրագրերով և զգալի ծավալի պայմանագրային աշխատանքների ուղղությամբ: 2008 թ. Գիտությունների ազգային ակադեմիայի կյանքում տեղի ունեցան երկու իրադարձություն, որոնք իրենց կարևորությամբ ու նշանակությամբ նմանը չունեն ակադեմիայի գոյության նախորդ վեց տասնամյակների ընթացքում:*

Դրանք աշխարհահռչակ գիտնական, մեծ հայրենասեր, մեր ակադեմիայի անընդմեջ 46 տարվա նախագահ Վիկտոր Համբարձումյանի 100-ամյա հոբելյանական միջոցառումներն էին և սփյուռքահայ 78 գիտնականների ընտրությունը մեր Ակադեմիայի արտասահմանյան անդամներ: Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիան ստեղծեց սփյուռքահայ գիտնականների բաժին, որի անդամները իրենց մասնագիտական գործունեությունը կիրականացնեն ՀՀ ԳԱԱ-ի համապատասխան հինգ բաժանմունքներում:

Ակադեմիայի երեք տասնյակից ավելի ինստիտուտներում և այլ գիտական հիմնարկներում աշխատում են 3820 մարդ: Այդ հիմնարկները միավորված են հինգ բաժանմունքներում: Ակադեմիայի կազմում են 75 իսկական անդամ, 54 թղթակից անդամ, 115 արտասահմանյան անդամ, գիտության 330 դոկտոր և 1020 թեկնածու:

2008 թ. ՀՀ ԳԱԱ 4 գիտական հետազոտական կենտրոններում շարունակվել են գիտական մշակումները բազային 75 և թեմատիկ ֆինանսավորմամբ 217 թեմաների, 4 նպատակային ծրագրերի ու մի քանի պայմանագրային աշխատանքների ուղղությամբ:

2008 թ. գիտական ստորաբաժանումներում պահպանվել է հիմնարար հետազոտությունների բարձր գիտական մակարդակը: Այդ է վկայում արտասահմանյան բարձր հեղինակություն ունեցող գիտական ամսագրերում տպագրված աշխատանքների թիվը, որը կազմում է 722 հոդված և 12 մենագրություններ, ինչպես նաև 52 միջազգային ծրագրերով կատարված աշխատանքները:

Այնուհետև զեկուցողը հանգամանորեն անդրադարձավ 2008 թ. մի շարք կարևոր գիտական արդյունքներին: Խոսեց նաև գիտական կադրերի, հրատարակչական և գրադարանների գործունեության ու սոցիալական խնդիրների մասին:

ԳԱԱ նախագահության գիտակազմակերպական գործունեության մասին զեկուցումով հանդես եկավ ԳԱԱ ակադեմիկոս քարտուղար, թղթակից անդամ Ա-րամ Շահինյանը: *Անդրադառնալով գիտական ոլորտի գործունեությունը կարգավորող իրավական դաշտում փոփոխությունների անհրաժեշտությանը՝ նա նկատեց, որ իրավական կարգավիճակով ԳԱԱ-ն հայտնվել է զնդանի և սալի արանքում: Այս նկատառմանն ի պատասխան ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանն անմիջապես միջամտեց, ասաց, որ իր հանձնարարությամբ շուտով օրենքի նախագիծ կմշակվի ակադեմիայի մասին, որը և կտա բոլոր հարցերի պատասխանը:*

Գիտության ասպարեզում առաջացած խնդիրների, ակադեմիայի գործունեության և առաջիկա անելիքների մասին խոսեց ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանը:

Այնուհետև ծավալվեց մտքերի աշխույժ և շահագրգիռ փոխանակում, որին ակտիվորեն մասնակցած Սփյուռքի ԳԱԱ արտասահմանյան անդամները, շնորհակալ լինելով իրենց նկատմամբ ցուցաբերած մեծ պատվի համար, հայ գիտնականների հետ գործակցելու և Հայաստանի գիտության հետագա զարգացման գործում իրենց ավանդը ներդնելու պատրաստակամություն հայտնեցին:

Ընդարձակ ելույթով հանդես եկավ ՀՀ Սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը: *ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ ընտրված գիտնականներին հանձնվեցին վկայականներ:*

ՀՀ ԳԱԱ ընդհանուր ժողովն արձանագրեց, որ ԳԱԱ նախագահությունում, բաժանմունքներում և գիտական կազմակերպություններում իրականացվող գործունեությունը նպատակաուղղվել է ինչպես նոր գիտական արդյունքների ստացմանը, ԳԱԱ համակարգի ենթակառուցվածքների գործունեության աշխուժացմանը, այնպես էլ գիտության ոլորտում հանրապետությունում իրականացվող բարեփոխումների շրջանակներում կատարվող գործառույթներում ՀՀ ԳԱԱ-ի դերի և տեղի հստակեցմանը:

ՀՀ ԳԱԱ-ի առջև ծառացող բազմաթիվ իրավական, իրավակազմակերպչական և նման այլ խնդիրներից խուսափելու համար ժողովն անհրաժեշտ համարեց «ԳԱԱ-ի մասին» ՀՀ օրենքի ստեղծումը:

Ընդհանուր ժողովը ՀՀ ԳԱԱ գործունեությունն առավել արդյունավետ դարձնելու նպատակով որոշեց առաջիկայում իրականացնել մի շարք միջոցառումներ: